

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մոտ ա/թ նոյեմբեր 8-ին կայացել է քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էին 69 քաղաքացի, ընդունելության էին եկել 68-ը:

Նպաստի հարցով դիմել էր 1, էլեկտրատեխնիկայի անժատման հարցով` 1, բուժման հարցով` 4 քաղաքացի: Իսկ 62 քաղաքացիներ դիմել էին ֆինանսական օժանդակության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: Բուժման ծախսերի հարցով դիմած քաղաքացիներին նույնպես տրվեց ֆինանսական օժանդակություն:

Այլ հարցերով դիմած քաղաքացիներին պատասխանելու նպատակով, ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից հանձնարարություն է տրվել մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին` քննարկել նշված դիմումները և ընդունված կարգով պատասխանել դիմումատուներին: